

Handwritten signature



Handwritten signature

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 1/07/423-10
« 28 » 04 2010 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՍ ՄԻՄՈՆՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՍՈՒԲԵՆ ԶՈՒՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՈՍՏԱՆԻԿ ՄԱՐԴՈՒԽՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ,
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ ՍԵՐԳԵՅ ՄԱՐԱՋՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՍ ԻՍԱԲԵԿՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ ՀՐԱՉՅԱ ՎԱՍԴԱՐՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ Մ. ՇԵՐԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԳՈՀԱՐ ՔՅԱԼՅԱՆԻՆ,
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐ ՎԱՀՐԱՍ ԱՈՒՔԵԼՅԱՆԻՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻՆ,
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՄԱՎՈՂԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ԴԱՐԲԻՅԱՆԻՆ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԵՆՅԱՆԻՆ,
ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ ԱՆԱԾԻՑ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի ռեկտոր

Ի կառարումն ՀՀ կառավարության կողմից հաստատված 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված ազգային ծրագրի 16-րդ՝ «Մենք հաղթանակի ժառանգներն ենք» ակցիայի շրջանակներում «Երիտասարդները հանուն խաղաղության» միջազգային երիտասարդական ֆոտոմրցույթի, դեպի Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձաններ երթերի կազմակերպում» կետի՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2010 թ. մայիսի 22-ին իրականացնելու է երիտասարդական քարոզարշավ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իսկ մայիսի 25-ին կազմակերպելու է «Երիտասարդները հանուն խաղաղության» միջազգային երիտասարդական ֆոտոմրցույթ:

Երիտասարդական քարոզարշավը Երևանում կկազմակերպվի Հանրապետության հրապարակ-Եռաբլուր-«Հաղթանակի զբոսայգի» երթուղով: Ֆոտոմրցույթի մասնակցության պայմանները ներկայացվում են առդիրով:

Ակնկալում ենք Ձեր օժանդակությունը՝ քարոզարշավին ու ֆոտոմրցույթին ուսանողների մասնակցության նպատակով նշված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տարածելու հարցում:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Handwritten signature Ա. ՔԱՐԱՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Պապյան
հեռ.՝ 54-69-31

Հայաստանի վ. Բրյուսովի անվան
Երևանի թեվաբանական
համալսարանի ՊՈԱԿ
ՄՈՒՏԷ № 01-22/195
30 04 2010 թ.

**«ՄԵՆՔ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՌԱՆԳՆԵՐՆ ԵՆՔ» ԱԿՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՐՈՁԱՐՇԱՎԻ ԵՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ
ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ» ՍԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՈՏՈՍՐՅՈՒՅԹԻ
ԾՐԱԳԻՐ**

ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԾՐԱԳՐԻ ԿԱՐԻՔԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

2010 թվականի մայիսին ողջ քաղաքակիրթ աշխարհը տոնելու է Հայրենական մեծ պատերազմում նվաճած հաղթանակի 65-ամյակը: Ֆաշիզմի դեմ հաղթանակը ձեռք բերվեց շատ ժողովուրդների միասնական ջանքերով, և այդ ծանր տարիներին, երբ հիրավի որոշվում էր ամբողջ մարդկության ճակատագիրը, հայ ազգը իր արժանի ներդրումն ունեցավ այդ հաղթանակում՝ հերոսաբար պայքարելով ֆաշիստական նվաճողների դեմ:

Պատերազմին մասնակցել են մոտ վեց հարյուր հազար հայեր, որոնցից շուրջ երեք հարյուր հազարը հերոսաբար զոհվել են:

Հայ ժողովրդի զավակները իրավամբ արժանի տեղ են գրավում նրանց շարքերում, ովքեր պատերազմի տարիներին քաջության ու արիության հրաշքներ են գործել:

Չնայած փոքրաթվությանը, մեր ժողովուրդը աշխարհին ի ցույց է դրել ռազմական սխրանքի իր օրինակները. 4 մարշալներ, 5 ադմիրալներ, 79 գեներալներ, ԽՍՀՄ 106 հերոսներ, 70000 մարտական շքանշանակիրներ ու մեդալակիրներ ենք մենք ունեցել:

Մեծ հաղթանակի 65-ամյակի տոնակատարությունը ևս մի հիշեցում է մարդկությանը զգոն լինելու և քաղաքական ու բարոյական կամք արտահայտելու համար, որպեսզի արմատախիլ արվեն ֆաշիզմի բոլոր ծիլերը:

Հաղթանակը այդ պատերազմում ապացուցեց նաև, որ մարդկանց բանականությունն ի գործ է հաղթահարելու միջլեռնիկական, միջռասայական, միջկրոնական և այլ նախապաշարումները:

Եվ մարդկանց հնարավորություն տրվեց դիմակայելու 21-րդ դարում հայտնված նոր մարտահրավերներին: Հակահիտլերյան կռաւիցիայի փորձը վառ օրինակ է նոր հազարամյակում հզոր հակահաբեկչական կռաւիցիայում պետությունների միավորման համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ի կատարումն 2009 թվականի հոկտեմբերի 9-ին Քիշնևում կայացած Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից երկրների ղեկավարների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի որոշման և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ հաստատված 1941-1945 թվականներին Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությունների հիմնական միջոցառումների նախապատրաստման և անցկացման ծրագրի, ինչպես նաև ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի մարտի 15-ի 1941-1945 թվականներին Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 65-րդ տարեդարձին նվիրված ազգային ծրագրում (այսուհետ՝ Ազգային ծրագիր) ներառված միջոցառումների նախապատրաստման (իրականացման) ընթացքի վերաբերյալ N 02/14.3/2601-10 հանձնարարականի և Ազգային ծրագրի 16-րդ՝ «Մենք հաղթանակի ժառանգներն ենք» ակցիայի շրջանակներում «Երիտասարդները հանուն խաղաղության» միջազգային երիտասարդական ֆոտոմրցույթի, դեպի Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձաններ երթերի կազմակերպում» կետի՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2010 թվականի մայիսին Երևան քաղաքում իրականացնելու է «Մենք հաղթանակի ժառանգներն ենք» ակցիայի շրջանակներում երիտասարդական քարոզարշավի և «Երիտասարդները հանուն

խաղաղության» միջազգային ֆոտոմրցույթի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն ընդգրկված է ԱՊՀ մասնակից երկրների «2009-2010 թվականների հումանիտար համագործակցության ոլորտի գերակա միջոցառումների ծրագրի» 8.14 կետում, ինչպես նաև ԱՊՀ մասնակից երկրների երիտասարդական հարցերով խորհրդի 2010 թվականի աշխատանքային ծրագրում:

Ծրագրի նպատակն է Հայրենական Մեծ պատերազմում տոնած պատմական հաղթանակի փառաբանումը, պատերազմի մասնակիցների գործած սխրանքների մեծարումը՝ որպես հետագա սերունդների խաղաղ ապրելու և արարելու գրավական, ռասսայական խտրականության անթույլատրելիության պարզաբանումը, ԱՊՀ անդամ երկրների երիտասարդ սերունդների միջև կապերի ամրապնդումը, մեր երկրի երիտասարդների շրջանում հայրենասիրական ոգու բարձրացումն ու համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելն ու այդ արժեքների արմատավորումը:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. «Երիտասարդները հանուն խաղաղության» միջազգային ֆոտոմրցույթ

Ծրագրի շրջանակներում նախատեսվող ֆոտոմրցույթը կիրականացվի երկու ձևաչափով՝ մրցութային և ցուցահանդեսային:

Ֆոտոմրցույթը կկայանա «Երիտասարդները հանուն խաղաղության» խորագրով:

Ֆոտոմրցույթի արդյունքները կամփոփվեն, և մրցույթի արդյունքներով լավագույնը ձանաչված աշխատանքները կցուցադրվեն 2010 թվականի մայիսի 25-ին:

Ֆոտոմրցույթին մասնակցելու պայմաններն են.

- Ֆոտոմրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության 18-30 տարեկան քաղաքացիները, ինչպես նաև ԱՊՀ անդամ երկրներից մեկական հաղթողներ:
- Լուսանկարների թեման՝ «Երիտասարդները հանուն խաղաղության»:
- Անհրաժեշտ է աշխատանքները ներկայացնել պասպարտու արված:
- Լուսանկարները պետք է լինեն 30 x 40 սմ չափսի, 2 օրինակից՝ հիմնական և պահեստային: Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել մինչև 10 աշխատանք:
- Աշխատանքներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2010 թվականի մայիսի 20-ը:

Մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված աշխատանքները կցուցադրվեն:

Ներկայացված աշխատանքները կվերադարձվեն մրցույթի ավարտից հետո:

Մրցույթի մասնակիցներին կտրվեն հավաստագրեր: Մրցույթի հաղթողները կստանան առաջին, երկրորդ և երրորդ կարգի դիպլոմներ:

Նախատեսվում են խրախուսական մրցանակներ՝ Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ մասնակից երկրների լավագույն աշխատանքների հեղինակներին:

Ծրագիրն իրականացվելու է Երևան քաղաքում 2010 թվականի մայիսի 25-ին: Նախատեսվում է ստեղծել մրցույթի իրականացման կազմակերպիչ և մրցութային հանձնաժողով, որում կներգրավվեն համապատասխան մասնագետներ և ոլորտի պատասխանատուներ:

Ծրագրի իրականացման, մրցույթի նպատակների, մասնակցության պայմանների, անցկացման ժամկետների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն կներկայացվի ԱՊՀ անդամ երկրների երիտասարդական հարցերի խորհրդի անդամներին և ԱՊՀ մասնակից երկրների գործադիր կոմիտեի միջոցով՝ ԱՊՀ մասնակից, ինչպես նաև խորհրդի անդամ չհանդիսացող երկրներին: Հայաստանի Հանրապետությունից մասնակիցներն իրենց աշխատանքները կներկայացնեն մրցութային հանձնաժողովին անձամբ կամ փոստային առաքման միջոցով, իսկ ԱՊՀ անդամ երկրներում համապատասխան հանձնաժողովները կընտրեն երեքական լավագույն աշխատանքներ, և

դրանցից առաջին տեղը զբաղեցրած աշխատանքների հեղինակները անձամբ կներկայացնեն դրանք մրցութային հանձնաժողովին:

Մրցույթ-ցուցահանդեսն անցկացնելու նպատակով կվարձակալվի համապատասխան դահլիճ. նախապես ծրագրված է անցկացնել Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում, որտեղ կցուցադրվեն Հայաստանից 20 և ԱՊՀ երկրներից ներկայացված երեքական լավագույն աշխատանքներ:

Մրցույթի հաղթող մասնակիցները կպարգևատրվեն, իսկ բոլոր մասնակիցներին կտրվեն մասնակցության հավաստագրեր:

2. «Մենք հաղթանակի ժառանգներն ենք» երիտասարդական քարոզարշավ

Քարոզարշավը կկայանա 2010 թվականի մայիսի 22-ին: Քարոզարշավի մասնակիցները՝ ՀՀ բուհերի ուսանողներ, երիտասարդներ, թվով 1000 մարդ, պաստառներով, դրոշակներով և ծաղիկեպսակներով 20 ավտոբուսներով կտեղափոխվեն Սարդարապատի հուշահամալիր, որտեղ կիրականացվի հիշատակի ակցիա՝ միտինգ-համերգի տեսքով: Այնուհետև, վերադառնալով Երևան, միջոցառման մասնակիցները կայցելեն Եռաբլուրի հուշահամալիր և հարգանքի տուրք կմատուցեն Արցախի հերոսամարտում զոհվածներին, որտեղից էլ կուղևորվեն դեպի Հաղթանակի զբոսայգի՝ Հայրենական մեծ պատերազմի հերոսների ծառուղիով քայլելով դեպի Անհայտ զինվորի հուշահամալիր: Նախատեսվում է հանդիպում Մեծ Հայրենականի վետերանների հետ, բացօթյա միտինգ-համերգի կազմակերպում:

Նմանատիպ ակցիաներ են նախատեսվում կազմակերպել նաև ՀՀ մարզկենտրոններում՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի մարզային երիտասարդական կենտրոններում:

Միջոցառումն առավել բազմաբովանդակ դարձնելու համար ակնկալվում է ակտիվ համագործակցություն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ:

Ծրագրի արդյունքը

Ծրագրերի հիմնական արդյունք կհանդիսանա երիտասարդների իրազեկվածությունը իրենց պապերի՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ կատարված սխրանքներին, նրանց փառաբանումը, այդ հաղթանակի իմաստավորումը որպես հետագա սերունդների խաղաղ ապրելու և արարելու գրավական, ռասսայական խտրականության անթույլատրելիության պարզաբանումը, ԱՊՀ անդամ երկրների երիտասարդ սերունդների միջև կապերի ամրապնդումը, երիտասարդների շրջանում հայրենասիրական ոգու բարձրացումն ու համամարդկային արժեքներին հաղորդակից դարձնելն ու այդ արժեքների արմատավորումը: